

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2007 թվականի հուլիսի 19-ի N 884-Ն որոշման մեջ
փոփոխություն կատարելու մասին»
Կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« _____ 2022 թվականի N ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ

19-Ի N 884-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ռազմական ուստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «Ռազմական ուստիկանության կառուցվածքն ու անձնակազմի թվակազմը հաստատելու մասին» N 884-Ն որոշման 1-ին հավելվածում ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետը:
2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշման 1-ին կետի հիման վրա մեկամսյա ժամկետում ապահովել ռազմական ուստիկանության ֆինանսական բաժնի լուծարման գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: